ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ /ԼԱԲՈՐԱՏՈՐ/ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7-3»

Ք.Մեղրի «24» փետրվարի 2020թ.

«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն»ՓԲԸ-ն իդեմս տնօրեն Լ.Վարդանյանի,որը գործում է ընկերության կանոնադրության հիմանվրա,այսուհետ«Գնորդ»,միկողմից,և ***«Արմենֆարմ»ՍՊԸ-ն***,իդեմս տնօրեն Լ.Գևորգյանի,որը գործում է ընկերության կանոնադրության հիմանվրա,այսուհետ«Վաճառող»մյուսկողմից,կնքեցինսույն պայմանագիրը հետևյալ մասին

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ)չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա)պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ)հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց,իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ)հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն է կանխատեսվում՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող
օգտագործվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ)ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,
2.1.8 Չնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին
անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի
ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան
հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու
պահպանությունը դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում
մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել
վերջինիս վճարման ենթակա գումարները,իսկ վճարման ժամկետի խախտման
դեպքում՝նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականուն, որակի մասին պայմանագրի
պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը
հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ողջամիտ
ժամկետում,երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է
հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և
նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո
Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով
հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունքունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված
կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված
ապրանքը:
2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված
կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և
Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա
գումարները:
2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե
Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:
2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն է կանխատեսվում,եթե
բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝պայմանագրով նախատեսված կարգով,
ծավալներով,ժամկետներում և հասցեով:
2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ)
ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝Գնորդի կողմից սահմանված
ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի
ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ
Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ՀՀ
օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով
նախատեսված կարգով,լրացնել թերի մատակարարվածը:
2.4.7 Հետտանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝
պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ
ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը
պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ
Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3
կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան
փաստաթղթերը:
2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո
Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով
հիմնավորված վնասները:
2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը
պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ
սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր
տեղեկացնել Գնորդին:

3.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4.ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի
ակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների
հպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի
մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից
յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է
տույժ՝մատակարարման ենթակա,սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05
(զրո ամբողջ հինգհարյուրերորորդական)տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին
չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում
Վաճառողից գանձվում է տուգանք՝պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ
տասնորդական)տոկոսի չափով: Ընդորում տուգանքը հաշվարկվում է նաև
ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում
կատարելու,սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը
հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա
գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի
խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված
աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝վճարման ենթակա,
սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական)
տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց
պարտավորությունները չկատարելու կամ չպատշաճ կատարելու համար
պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված
կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում
իրենց պայմանագրայի ն պարտավորությունները լրիվ կատարելուց:

7.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ
մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են
պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի
ազդեցության հետևանքով,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց
հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը,ջրհեղեղը,հրդեհը,պատերազմը,
ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական
հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների
աշխատանքի դադարեցումը,պետական մարմինների ակտերը և այլն,որոնք
անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների
կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3
(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի
լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս
կողմին:

8.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և
գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած
պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝կողմի վճարային պարտավորությունը չի
կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝հակընդդեմ պարտավորության
հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված
համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող
փոխանցվել այլ անձի,առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի
պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության
կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ
պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում,
մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ
փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված
մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում
Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը,ապա այդ հիմքերի հայտ
գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե
արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի
լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության
օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը

քելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի դադարեցման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ գերակայում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ՝	ՎԱՃԱՌՈՂ՝
" Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ	"Արմենֆարմ " ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի , Գործարարների 42	Գործ. Հասցե՝ ք. Երևան, Միկոյան 25/18
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ" Մեղրու մ/ճ	" Էվոկաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 16099-003354200	Հ/Հ 1660004093580100
ՀՎՀՀ 09705024	ՀՎՀՀ 00039741
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru	Էլ. Հասցե armenpharmllc@gmail.com
Հեռ. 0286-60685	Հեռ. 010572892
"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ-ի տնօրեն / / Լ. Վարդանյան	" Արմենֆարմ" ՍՊԸ-ի տնօրեն / / Լ. Գևորգյան
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված 1

ՔԻՄԻԱԿԱՆ /ԼԱԲՈՐԱՏՈՐ/ ՆՅՈՒԹԵՐԻ

N ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7-3 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՎԱԾ 24.02.2020թ.

<<ԱՐՄԵՆՖԱՐՄ>> ՍՊԸ

Ապրանքի տեխնիկական բնութագիրը և գնման ժամանակացույցը

Նախատեսվում է գնել 2020 թվականի ընթացքում

Հ/Հ	չ/հ	ԳՄԱ դասակարգման կոդը (CPV)	Առևտրային անվանումը	արտադրողը և ծագման երկիրը	չ/մ	միավոր գինը	քանակը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	տեխնիկական բնութագիրը
1	9	24451140	Ժավել Աբսոլյուտ	Ալդեզ	կգ	3000	4	12000	Դեղաձևը հաբեր; Ակտահանիչ միջոցը պարունակում է դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղ ազդող նյութ, ֆունկցիոնալ հավելումներ ադիպինաթթու, նատրիումի կարբոնատ և բիկարբոնատ: Հաբերը ինքնալուծվող են: Ակտահանիչ նյութը պետք է ունենա մանրէասպան ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների, (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիաների), վիրուսների (արտաբնդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր) նկատմամբ՝ ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը պետք է լինի՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 7 ամիս , մինչև 2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ ժամկետի 1/2-ը, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Պետք է ունենա ՀՀ ԱՆ կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ:
2	40	24451141	Սուրֆանիոսի աշխ. Լուծույթ	Անիոս Լաբորատորիա	լիտր	20	2400	48000	Դեղաձևը՝ խտանյութից ստացվի նշված քանակով մաքսիմալ խտությամբ պատրաստի աշխատանքային լուծույթ, որով հնարավոր կլինի ապահովել հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաբնդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա, բորբոսասնկեր) ազդեցությունը մինչև 60-120 րոպեում (ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Ազդող նյութեր են հանդիսանում՝ դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, քառավալենտ ամոնիումային միացություններ,գուանիդինի ածանցյալներ, և այլն, ինչպես նաև՝ էթիլենդիամինտետրաքացախաթթու, ոչ իոնածին մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ), կայունացուցիչ, հոտավետ նյութեր և ջուր: : Համատեղելի է ցանկացած նյութից պատրաստված բժշկական նշանակության պարագաների, սեղանների մակերեսների հետ՝ օրգանական և անօրգանական աղտոտվածությունները հեռացնելու նպատակով: Ակտահանիչ նյութը պետք է ապահովի Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը պետք է լինի՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 7 ամիս , մինչև 2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ ժամկետի 1/2-ը, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Պետք է ունենա ՀՀ ԱՆ կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ:
Ընդամենը վաթսուն հազար ՀՀ դրամ								60000	

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 27-ը:

Ծանոթություն 1
Նշված քանակները առավելագույնն են:
Ծանոթություն 2 Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
Ապրանքը մատակարարվում է վաճառողի կողմից ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարարների 42 հասցեով, գնորդի կողմից պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳՆՈՐԴ՝
" Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի , Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ" Մեղրու մ/ճ
Հ/Հ 16099-003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60685

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ-ի տնօրեն / / Լ. Վարդանյան

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ՝
"Արմենֆարմ " ՍՊԸ
Գործ. Հասցե՝ ք. Երևան, Միկոյան 25/18
" Էվոկաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1660004093580100
ՀՎՀՀ 00039741
Էլ. Հասցե armenpharmllc@gmail.com
Հեռ. 010572892

" Արմենֆարմ" ՍՊԸ-ի տնօրեն / / Լ. Գևորգյան

Կ.Տ

Հավելված N2

«24» փետրվարի 2020թ. կնքված

«ՈՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7-3» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Հնդամենը
Գնված ապրանքի գնի	20%	25%	40%	50%	60%	70%	80%	85%	90%	100%	100%

ԳՆՈՐԴ՝
" Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի , Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ" Մեղրու մ/ճ
Հ/Հ 16099-003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60685

ՎԱՃԱՌՈՂ՝
"Արմենֆարմ " ՍՊԸ
Գործ. Հասցե՝ ք. Երևան, Միկոյան 25/18
" Էվոկաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1660004093580100
ՀՎՀՀ 00039741
Էլ. Հասցե armenpharmllc@gmail.com
Հեռ. 010572892

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ-ի տնօրեն / / Լ. Վարդանյան " Արմենֆարմ" ՍՊԸ-ի տնօրեն / / Լ. Գևորգյան

Կ.Տ. Կ.Տ.